Նա ևս ցուցանեմ ձեզ քանի նշաւակ որում հաստատել կարէ 'ի միտս ձեր ասացուածքն իմ 'ի վերայ բանին ազատութեան մերոյ, և հարկաւորութիւնն ունենալոյ մեր անխախտելի Օրէնքս, և հաստատապէս տպաւորեսցի 'ի միտս ընթերցողացդ զի ոչ երբէք կարի ընթանալ ոչ ոք գործ ուղղակի 'ի ճանապարհս իւր մինչ ոչ իցէ ըստ Օրինաց, ահա նայերուք աչօք ձերօք և երկայնամիտ լերուք մտաք՝ այր ոմն որում կամի կառուցանել տուն, սովորութիւն է սկսանիլ հիմն և դնել հիմն 'ի վերայ հաստատութեան երկրի, ով որ կամի ցանել յունդս և արտս ցորենոյ, գարոյ և այլն, սովորութիւն է նախ վարել արտս մանրել երկիր խոշորն հետ ցանելոյն ըստ սահմանին ջրել և այլն, այր ոմն որում 'ի մերկութենէ կամի զգեստաւորիլ սովորութիւնէ նախ զգենուլ պատմուճան և 'ի վերայ նորա այլ և այլ զգեստ, այր որում կամի ուսանիլ դարբնութիւն նախ սովորիլ փչել փքսով յեռոյ հարկանել չաքուչ և այլն, պատանի ոմն որ կամի մուծանել զինքն 'ի հրահանգ սովորութիւն է սկսանիլ ճանանչել նախապէս տառքն այբբենաց մինչև այլքն, այր որում ցանկայ ընդունիլ պաշտօն քահանայութեան սովորութիւն է հնազանդիլ վարպետի՝ աշակերտիլ հրահանգչին իւրոյ և առնուլ աստիճանաւ կարգ իւր, այր ոմն որ կամի մուծանել զինքն զինուորութեան, սովորութիւն է ուսանիլ Շարժելն